

**ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 10

3 մարտի 2014 թ.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով «Օրիֆլեյմ Քոսմետիքս» ՍՊԸ կողմից ՀՀ ԿԱ ՊԵԿ խոշոր հարկ վճարողների ՀՏ 19.12.2013 թ-ի թիվ 1002991 ստուգման ակտի դեմ ներկայացված դիմում-գանգատը (այսուհետ նաև դիմում-գանգատ), ինչպես նաև վերջինիս առնչվող նյութերն ու ապացույցները, եկավ եզրակացության, որ դիմում-գանգատի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ:

«Օրիֆլեյմ Քոսմետիքս» ՍՊԸ կողմից ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե ներկայացրել է դիմում-գանգատ, որով խնդրել է անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ խոշոր հարկ վճարողների ՀՏ 19.12.2013 թ-ի թիվ 1002991 ստուգման ակտի 1-ին, 3-րդ, 5-րդ և 23-րդ կետերը: Այնուհետև, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե ներկայացված 28.02.2014 թ-ի գրությամբ «Օրիֆլեյմ Քոսմետիքս» ՍՊԸ-ն խնդրել է լուծում չտալ դիմում-գանգատին՝ կարճելով վարչական վարույթը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն. «Դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե դիմողը գրավոր ձևով հրաժարվում է իր դիմումից»:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի դրույթներով՝ Հանձնաժողովը գտնում է, որ «Օրիֆլեյմ Քոսմետիքս» ՍՊԸ դիմում-գանգատի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

«Օրիֆլեյմ Քոսմետիքս» ՍՊԸ դիմում-գանգատի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը կարճել:

Հանձնաժողովի նախագահ



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ